

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 26-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«26) «Ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևի սահմանումը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1.1 կետում «օգտակար հանածոյի արդյունահանման» բառերից առաջ լրացնել «մետաղական օգտակար հանածոյի դեպքում» բառերը, ինչպես նաև «մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10» բառերը փոխարինել «10» թվով,

2) լրացնել նոր՝ 1.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության՝ 2021 թվականից սկսած ոչ մետաղական օգտակար հանածոների գնահատված և հաստատված պաշարներով նոր հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար մինչև 3 տարի ժամկետով, եթե հանքավայրի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ 10 և ավելի տարի առաջ, և կարող է երկարաձգվել միայն սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.3-րդ մասով սահմանված դեպքում:»:

3) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով հանքավայրերի դեպքում ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ մինչև 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ մինչև 20 տարի ժամկետով»:

4) լրացնել նոր՝ 3.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1) ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ 2021 թվականից սկսած ոչ մետաղական օգտակար հանածոների գնահատված և հաստատված պաշարներով նոր հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի դեպքում՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ 20 տարի ժամկետով: Մինչև 20 տարի ժամկետով թույլտվություն կարող է տրամադրվել, կամ տրամադրված թույլտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2.2-րդ և 2.3-րդ մասերում «10-օրյա» բառը փոխարինել «30-օրյա» բառով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 38-րդ հոդվածը լրացնել նոր՝ 10-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող հանքերևակումներից ավազի և ավազակոպձային խառնուրդի վերականգնվող պաշարների ուսումնասիրության դեպքում սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, որի դիմումն առաջինն է գրանցվել: Այն դեպքում, երբ առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերը դեռ չեն ավարտվել, իսկ մյուս

դիմումատուների դեպքում՝ ավարտվել են, մյուս դիմումատուների դիմումների վերաբերյալ որոշման կայացման ժամկետը կասեցվում է մինչև հաջորդաբար առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը»:

2) հոդվածը լրացնել նոր՝ 5.1-5.3 մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1 Եթե ընդերքի այն տեղամասը որի համար դիմումատուն դիմել է, կամ դրա մի մասը, մետաղական օգտակար հանածոների ընդերքօգտագործման իրավունքի դադարեցված օբյեկտ է, և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, և առկա չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, ապա դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերի ավարտից հետո դիմումատուի վերաբերյալ որոշման ընդունման ժամկետը կասեցվում է մինչև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կայացումը, բայց ոչ ավել քան 1 տարի:

5.2 Վճիռը հրապարակվելուց հետո 10-օրյա ժամկետում դիմումատուն պարտավոր է դիմել լիազոր մարմին ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացը շարունակելու համար՝ ներկայացնելով.

1) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

2) Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

3) հայտարարություն, նախկինում ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի տվյալների ճշտությունը հավաստելու և դրանք անփոփոխ մնալու վերաբերյալ:

5.3 Նշված ժամկետում սույն հոդվածի 5.2-րդ մասով սահմանված դիմումը և փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում սույն հոդվածի 5.1 մասով ներկայացված դիմումը համարվում է մերժված օրենքի ուժով:»:

3) 7-րդ մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի դադարեցված օբյեկտ է, և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, և առկա չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:»:

4) 7-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.Սույն հոդվածի 5.1–ին մասով սահմանված 1 տարվա ժամկետը լրանալուց հետո դիմումն օրենքի ուժով համարվում է մերժված:»:

**Հոդված 6.** Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը տրամադրվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար՝ մինչև 3 տարի ժամկետով և առանց երկարաձգման հնարավորության, բացառությամբ սույն հոդվածի 2.3-րդ մասի, եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության թույլտվության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոների նոր հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց պաշարները կգնահատվեն և կհաստատվեն 2021 թվականից սկսած՝ 10 և ավելի տարի առաջ: Մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում վերագնահատման նպատակով ուսումնասիրության թույլտվություն չի տրամադրվում:»:

**Հոդված 7.** Օրենսգրքի 49-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «օգտակար» բառից առաջ ավելացնել «մետաղական» բառը, իսկ «մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ նախորդող 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ նախորդող 10» բառերը փոխարինել «նախորդող 10» բառով,

2) լրացնել նոր՝ 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ոչ մետաղական օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները կգնահատվեն և կհաստատվեն 2021 թվականից սկսած, իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով կարող է դիմել լիազոր մարմին այն հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու

օրվա դրությամբ նախորդող 10 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով հաստատվել են օգտակար հանածոյի պաշարներ: Մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում սույն մասով սահմանված պաշարների հաստատման ժամկետային սահմանափակումը չի կիրառվում»:

**Հոդված 8.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2) մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե մետաղական օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը»:

**Հոդված 9.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել նոր՝ 1.4 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.4) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները գնահատվել և հաստատվել են 2021 թվականից սկսած, ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 20-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 20-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով

փորձաքննվող առաջին փուլի նախագիծը: Մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում՝ ողջ հաշվեկշռային պաշարների քանակի ներառումը պարտադիր չէ»:

2) 1-ին մասի 9-րդ կետում «շահագործման դեպքում» բառերից հետո լրացնել «՝ արդյունահանման նպատակ(ներ)ը,» բառերը և կետադրական նշանները:

**Հոդված 10.** Օրենսգրքի 51-րդ հոդվածի 10-րդ մասում «գրանցվել:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Այն դեպքում, երբ առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերը դեռ չեն ավարտվել, իսկ մյուս դիմումատուների դեպքում՝ ավարտվել են, մյուս դիմումատուների դիմումների վերաբերյալ որոշման կայացման ժամկետը կասեցվում է մինչև հաջորդաբար առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը:»:

**Հոդված 11.** Օրենսգրքի 61-րդ հոդվածի 6-րդ մասում «կարգով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման թույլտվության դեպքում թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակների դրույքաչափերի հանրագումարով:

#### **Հոդված 12.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-ամսյա ժամկետում, Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը հաստատում է Ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը:

3. Սույն օրենքը տարածվում է նաև օրենքի ուժի մեջ մտնելու պահին ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման իրավունք հայցելու կամ գործող արդյունահանման իրավունքներում փոփոխություններ կատարելու նպատակով ներկայացված դիմումների վրա:

## ՏԵՂԵԿԱՔ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) [17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնելու](#) նոր՝ [26-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.](#)

«26) «Ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևի սահմանումը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1.1 կետում «օգտակար հանածոյի արդյունահանման» բառերից առաջ լրացնել «մետաղական օգտակար հանածոյի դեպքում» բառերը, ինչպես նաև «մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10» բառերը փոխարինել «10» թվով,

2) լրացնել նոր՝ 1.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության՝ 2021 թվականից սկսած ոչ մետաղական օգտակար հանածոների գնահատված և հաստատված պաշարներով նոր հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար մինչև 3 տարի ժամկետով, եթե հանքավայրի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ 10

և ավելի տարի առաջ, և կարող է երկարաձգվել միայն սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.3-րդ մասով սահմանված դեպքում:»:

3) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով հանքավայրերի դեպքում ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ մինչև 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ մինչև 20 տարի ժամկետով»:

4) լրացնել նոր՝ 3.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1) ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ 2021 թվականից սկսած ոչ մետաղական օգտակար հանածոների գնահատված և հաստատված պաշարներով նոր հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի դեպքում՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ 20 տարի ժամկետով: Մինչև 20 տարի ժամկետով թույլտվություն կարող է տրամադրվել, կամ տրամադրված թույլտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները»:

**Հոդված 32.** Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2.2-րդ եւ 2.3-րդ մասերում «10-օրյա» բառը փոխարինել «30-օրյա» բառով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 38-րդ հոդվածը լրացնել նոր՝ 10-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող հանքերակումներից ավազի և ավազակոպչային խառնուրդի վերականգնվող պաշարների ուսումնասիրության դեպքում սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը:»:

**Հոդված 53.** Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

**1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**



«5. Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, որի դիմումն առաջինն է գրանցվել: Այն դեպքում, երբ առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերը դեռ չեն ավարտվել, իսկ մյուս դիմումատուների դեպքում՝ ավարտվել են, մյուս դիմումատուների դիմումների վերաբերյալ որոշման կայացման ժամկետը կասեցվում է մինչև հաջորդաբար առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը»:

2) հողվածք լրացնել նոր՝ 5.1-5.3 մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1 Եթե ընդերքի այն տեղամասը որի համար դիմումատուն դիմել է, կամ դրա մի մասը, մետաղական օգտակար հանածոների **ընդերքօգտագործման իրավունքի** դադարեցված օբյեկտ է, և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, և առկա չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, ապա դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերի ավարտից հետո դիմումատուի վերաբերյալ որոշման ընդունման ժամկետը կասեցվում է մինչև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կայացումը, բայց ոչ ավել քան 1 տարի:

5.2 Վճիռը հրապարակվելուց հետո 10-օրյա ժամկետում դիմումատուն պարտավոր է դիմել լիազոր մարմին ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացը շարունակելու համար՝ ներկայացնելով.

1) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

2) Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

3) հայտարարություն, նախկինում ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի տվյալների ճշտությունը հավաստելու և դրանք անփոփոխ մնալու վերաբերյալ:

5.3 Նշված ժամկետում սույն հողվածի 5.2-րդ մասով սահմանված դիմումը և փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում սույն հողվածի 5.1 մասով ներկայացված դիմումը համարվում է մերժված օրենքի ուժով:»:

3) 7-րդ մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ոչ մետաղական օգտակար հանածոների **արդյունահանման նպատակով ընդերքի**

Երկրաբանական ուսումնասիրության իրավունքի դադարեցված օբյեկտ է, և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, և առկա չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:»:

5) 7-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.Սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված 1 տարվա ժամկետը լրանալուց հետո դիմումն օրենքի ուժով համարվում է մերժված:»:

**Հոդված 64.** Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը տրամադրվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար՝ մինչև 3 տարի ժամկետով և առանց երկարաձգման հնարավորության, բացառությամբ սույն հոդվածի 2.3-րդ մասի, եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության թույլտվության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոների նոր հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց պաշարները կգնահատվեն և կհաստատվեն 2021 թվականից սկսած՝ 10 և ավելի տարի առաջ: Մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում վերագնահատման նպատակով ուսումնասիրության թույլտվություն չի տրամադրվում:»:

**Հոդված 57.** Օրենսգրքի 49-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «օգտակար» բառից առաջ ավելացնել «մետաղական» բառը, իսկ «մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ նախորդող 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ նախորդող 10» բառերը փոխարինել « նախորդող 10» բառով,

2) լրացնել նոր՝ 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ոչ մետաղական օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները կգնահատվեն և կհաստատվեն 2021 թվականից սկսած, իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով կարող է դիմել լիազոր մարմին այն հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող 10 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով հաստատվել են օգտակար հանածոյի պաշարներ: Մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում սույն մասով սահմանված պաշարների հաստատման ժամկետային սահմանափակումը չի կիրառվում»:

**Հոդված 86.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1.2 կետը շարադրել հետևյալ [խմբագրությամբ բովանդակությամբ](#).

«1.2) մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե մետաղական օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը»:

**Հոդված 97.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

**1)** 1-ին մասը լրացնել նոր՝ [1.41.2.1](#) կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«[1.41.2.1](#)) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները գնահատվել և հաստատվել են 2021 թվականից սկսած, ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի

աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 20-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 20-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը: Մինչև 2021 թվականը գնահատված և հաստատված պաշարներով ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում՝ ողջ հաշվեկշռային պաշարների քանակի ներառումը պարտադիր չէ»:

[2\) 1-ին մասի 9-րդ կետում «շահագործման դեպքում» բառերից հետո լրացնել «՝ արդյունահանման նպատակ\(ներ\)ը,» բառերը և կետադրական նշանները:](#)

**Հոդված 108.** Օրենսգրքի 51-րդ հոդվածի 10-րդ մասում «գրանցվել:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Այն դեպքում, երբ առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերը դեռ չեն ավարտվել, իսկ մյուս դիմումատուների դեպքում՝ ավարտվել են, մյուս դիմումատուների դիմումների վերաբերյալ որոշման կայացման ժամկետը կասեցվում է մինչև հաջորդաբար առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը»:

[Հոդված 11. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 6-րդ մասում «կարգով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման թույլտվության դեպքում թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակների դրույքաչափերի հանրագումարով:](#)

[Հոդված 12.](#)

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-ամսյա ժամկետում, Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը հաստատում է Ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը:

3. Սույն օրենքը տարածվում է նաև օրենքի ուժի մեջ մտնելու պահին ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման հրավունք հայցելու կամ գործող արդյունահանման հրավունքներում փոփոխություններ կատարելու նպատակով ներկայացված դիմումների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ (Կ-882-01.03.2021-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր՝ 1-ին հոդված:	<p>Նախագիծը լրացնել նոր 1-ին հոդվածով՝ նախատեսելով լրացում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասում.</p> <p><b>«Հոդված 1.</b> Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 26-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«26) «Ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևի սահմանումը:»:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Լրամշակված նախագծում լրացվել է նոր՝ 1-ին հոդված:</p> <p>Ըստ այդմ փոփոխվել են նախագծի հոդվածների համարակալումները:</p>	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր՝ 4-րդ հոդված:	<p>Նախագիծը լրացնել նոր 4-րդ հոդվածով՝ նախատեսելով լրացում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 38-րդ հոդվածում.</p> <p><b>«Հոդված 4.</b> Օրենսգրքի 38-րդ հոդվածը լրացնել նոր՝ 10-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«10. սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող հանքերակույմներից ավազի և ավազակոպձային խառնուրդի վերականգնվող պաշարների ուսումնասիրության դեպքում</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Լրամշակված նախագծում լրացվել է նոր՝ 4-րդ հոդված:</p>	Ընդունվել է:

			<p>սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը:»:</p>		
<p>3</p>	<p>«<b>Կառավարություն</b></p>	<p>Նախագծի 3-րդ հոդված:</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ նախատեսելով լրացում «<b>ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածում.</b>                  2) հոդվածը լրացնել նոր՝ 5.1-5.3 մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.                  «5.1. Եթե ընդերքի այն տեղամասը որի համար դիմումատուն դիմել է, կամ դրա մի մասը, մետաղական օգտակար հանածոների ընդերքօգտագործման իրավունքի դադարեցված օբյեկտ է, և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, և առկա չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, ապա դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերի ավարտից հետո դիմումատուի վերաբերյալ որոշման ընդունման ժամկետը կասեցվում է մինչև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կայացումը, բայց ոչ ավել քան 1 տարի»:                  5.2 Վճիռը հրապարակվելուց հետո 10-օրյա ժամկետում դիմումատուն պարտավոր է դիմել լիազոր մարմին ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացը շարունակելու համար ներկայացնելով.                  1) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ</p>	<p>Լրամշակված նախագծի 5-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 2-րդ մասով:</p>	<p>Ընդունվել է:</p>

			<p>բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.</p> <p>2) Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.</p> <p>3) հայտարարություն, նախկինում ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի տվյալների ճշտությունը հավաստելու և դրանք անփոփոխ մնալու վերաբերյալ:</p> <p>5.3 Նշված ժամկետում սույն հոդվածի 5.2-րդ մասով սահմանված դիմումը և փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում սույն հոդվածի 5.1 մասով ներկայացված դիմումը համարվում է մերժված օրենքի ուժով:»:</p>		
4	<p>«<b>Կառավարություն</b>»</p>	<p>Նախագծի 3-րդ հոդված:</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ նախատեսելով փոփոխություն «<b>ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 10-րդ կետում.</b></p> <p>3) 7-րդ մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«10. ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի դադարեցված օբյեկտ է,</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Լրամշակված նախագծի 5-րդ հոդվածում լրացվել է նոր՝ 3-րդ մաս:</p>	<p>Ընդունվել է:</p>



			և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, և առկա չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:»:		
5	« կառավարություն	Նախագծի հոդված: 3-րդ	Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ նախատեսելով լրացում « ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասում. 4) 7-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «11.Սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված 1 տարվա ժամկետը լրանալուց հետո դիմումն օրենքի ուժով համարվում է մերժված:»:	Ընդունվել է:  Լրամշակված նախագծի 5-րդ հոդվածում լրացվել է նոր 4-րդ մաս:	Ընդունվել է:
6	« կառավարություն	Նախագծի հոդված 6-րդ	Նախագծի 6-րդ հոդվածում «շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով:	Ընդունվել է:  Լրամշակված նախագծի 8-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7	« կառավարություն	Նախագծի հոդված 7-րդ	Նախագծի 7-րդ հոդվածում «1.2.1)» թիվը փոխարինել «1.4» թվով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթները:	Ընդունվել է:  Լրամշակված նախագծի 9-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8	« կառավարություն	Նախագծի հոդված 7-րդ	Նախագծի 7-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ նախատեսելով լրացում « ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում. 2) 1-ին մասի 9-րդ կետում «շահագործման դեպքում» բառերից հետո լրացնել « արդյունահանման նպատակ(ներ)ը,» բառերը և	Ընդունվել է:  Լրամշակված նախագծի 9-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կետադրական նշանները:		
9	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 11-րդ հոդված:	Նախագիծը լրացնել նոր 11-րդ հոդվածով՝ նախատեսելով լրացում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի 6-րդ մասում. «Հոդված 11. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 6-րդ մասում «կարգով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման թույլտվության դեպքում թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակների դրույքաչափերի հանրագումարով:»:	Ընդունվել է:  Լրամշակված նախագծում լրացվել է նոր՝ 11-րդ հոդված:	Ընդունվել է:
1 0	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 12-րդ հոդված:	Նախագիծը լրացնել նոր 12-րդ հոդվածով՝ նախատեսելով անցումային դրույթներ. «Հոդված 12. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-ամսյա ժամկետում, Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը հաստատում է Ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը: 3. Սույն օրենքը տարածվում է	Ընդունվել է:  Լրամշակված նախագծում լրացվել է նոր՝ 12-րդ հոդված:	Ընդունվել է:

			նաև օրենքի ուժի մեջ մտնելու պահին ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման իրավունք հայցելու կամ գործող արդյունահանման իրավունքներում փոփոխություններ կատարելու նպատակով ներկայացված դիմումների վրա:»:		
--	--	--	--	--	--